



Ardshinbank

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏԻ ՏԵՍԱԿԸ		ՄՈՏԵՑՈՒՄԸ	
1	Անգրավ վարկեր՝ ամսական հավասարաչափ մարումով	Ակնթարթային վարկ	Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին: Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ: Եթե վարկի ժամկետը լրանում է մարտի 16-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակաշրջանում, վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:
		Աշխատավարձային վարկ	
		Ազրո Էքսպրես վարկ	
		Բիզնես Էքսպրես վարկ	
		Խնդրահարույց վարկի վերաֆինանսավորման նպատակով տրամադրված վարկ	
2	Անգրավ վերաֆինանսավորվող վարկեր	Ուսանողական վարկ	Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է: Եթե վարկի ժամկետը լրանում է մարտի 16-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակաշրջանում, վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:
		Պետական ծրագրի շրջանակներում գինձառայողներին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկ	
		Ջերմ օջախ բնակարանային միկրովարկ	
3	Հաշվարկային քարտով վարկային գծեր և վարկային քարտեր	Աշխատավարձային վարկային գիծ	Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին: Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակաշրջանում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով Վարկի մարումները կշարունակվեն կատարվել համաձայն պայմանների:
		Nur Card Express վարկային գիծ	
		Վարկային քարտեր (բացառությամբ դրամական միջոցների գրավով ապահովվածի)	
		Մեղու քարտ	
4	Նվազող սահմանաչափով վարկային գծեր	Աշխատավարձային վարկային գիծ	Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է: Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակաշրջանում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:
		Կենսաթոշակային վարկային գիծ	

5	Ոսկու գրավով վարկեր	Ոսկու գրավով վարկերի ավասարաչափ՝ անուիտետային մարումով	Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին: Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ: Եթե վարկի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակաշրջանում, վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:
		Ոսկու գրավով վարկեր՝ ոչ անուիտետային մարումով	Վարկային արձակուրդը կերկարաձգվի մինչև հուլիսի 1, այսինքն՝ մինչև հուլիսի 1-ը մարում չկատարելու դեպքում վարկը ժամկետանց չի համարվի, հետևաբար, տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվի: Վարկի երկարաձգման դեպքում համապատասխան վճարները հնարավոր կլինի ավելացնել վարկի գումարին՝ չկատարելով կանխիկ վճարումներ:
6	Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական, հիփոթեքային և պարզ վարկեր	Անշարժ գույքի գրավով ապահովված էքսպրես սպառողական վարկ	Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է: Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի: Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ:
		Էքսպրես վերոնորգման վարկ	
		Բոլոր տեսակի հիփոթեքային վարկեր	
		Պարզ վարկեր՝ անհատ ձեռնարկատեր վարկառուով	